



ՏՆՕՐԷՆ ԽՄԱՂԻՐ
ԵՒ
ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ
ՆԻԿ. Մ. ԹԻՒՂԵՆՏՆԱՆ

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՄԱՐՏԻ 20 ԹՐ. ՄԷԹԱՆԻ ԲԻՆԱՆ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ունեւոր	
Կ. Պօլոյ	Համար
Տարեկան	772. 100
Վեցամսեայ	» 50
Եռամսեայ	» 25
Գուտապ համար	
Տարեկան	772. 150
Վեցամսեայ	» 75
Եռամսեայ	» 40
Օտար երկիր տրկն. 40 Յր.ք.	

ԽՄԱՂԻՐԱՏՈՒՆ
Ղալաթիւս Բէրլինից Բազար
Խոսի Խոսի զէմը Սամուր փո-
ղոց Թիւ 13

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Յիօրէնցայ հրատարակեալ
Կածէթ թա տիտալիտ լրագիրը,
իւր յնս. 2/ 14 թիւ թերթին մէջ,
Ունիոյ բարեկարգութեանը
համար հոն զրկուող կայս. քըն.
Նիշներուն արարմանցը վրայօք,
հայազգիի մասորագրութեամբ
ըզ հետեւեալ նամակը կ'հրատա-
րակէ, զոր հարկ կ'համարիմք
յառաջ բերել, ոչ թէ համա-
միտ գանուելնու համար յիշ-
եալ նամակին, այլ ազգին վե-
րաբերեալ կենսական խնդրոյ
մը նկատմամբ օտար ազգի լե-
րագրաց մէջ տեսնուած հրա-
տարակութիւն մթ իրր ի ծանօ-
թութիւն յառաջ բերելու հա-
մար միայն:

Մարտ 29 (17) մայիս
Քանի մը օր է որ հասած են
հոս կայսերական քննիչքն գա-
ւառին Բերիոյ, վսեմ. Մաղ-
հար բաշա և վսեմ. Նուրեան
էֆ. Ինչպէս նաև անդղիացի
պաշտօնակալն Մ. Չիրմայտ,
հարիւր հեծեալ ոսականաց
ընկերութեամբ, Չէյթուր լե-
րին հոչակաւոր խնդիրը լուծե-
լու համար:

Քանի մը օր Մարտ 29 մայիս
ետքը դէպ ի Չէյթուր ուղեւո-
րեցան, ուր ամեն ակնկալու-
թեանց հակառակ՝ բնակիչնե-
րէն աղէկ ընդունելութիւն
գտան, որոնք զիրենք զիմաւո-
րելու ելան քրիստոնէայ վար-
ժարանաց աշակերաններով մէկ-
տեղ, Սուլթան Ապտիւլ Համիտ
Խան կայսեր բարօրութեանը
համար երգեր եղանակելով:

Մինչև ցայսօր ամենեւին
խնդիր մը չորոշուեցաւ, և ոչ
բարեկարգութիւն մը գործադ-
րուեցաւ, և ինչպէս կ'երևի,
կայսերական քննիչքն համարիտ
չեն ի մասին գործողութեանց,
սրովք այն դժբաղդ բնակչաց
խաղաղութիւնը և հանդարտու-
թիւնը շուտ վերահաստատուի:

Մաղհար բաշային բարձր
գաղափարաց համեմատ, Չէյ-
թուրցիները նուաճեալ պահե-
լու միակ միջոցը՝ հոն ամրոց-
ներ շինելն է, և անոնց մէջ Չէր-
քէզներ բնակեցնել, իսկ Նուր-
եան էֆ. և Մ. Չիրմայտ ոչ
միայն չեն ընդունիր հոն Չէր-
քէզներ գաղթել տալու միջոցը,
այլ և ոչ իսկ ամրոցներ շինելու
խորհուրդը:

Ստուգիւ վսեմ. Նուրեան
էֆ. իւր սովորական նրբամիտ
և ճարտարարան երեւութիւք,
ոչ թէ իւր կրօնակցաց բարւոյն
համար է որ կ'մերժէ իւր պաշ-
տօնակցին խորհուրդը, այլ մի-
այն օտար տէրութեանց ներ-
կայացուցչաց պաշտպանութիւ-
նը և համակրութիւնը ստանա-
լու համար, որոնց առջև կը
այրասուէ իւր ծառայած պե-
տութեան ընթացքը, որպէս զի
ինչպէս որ կըսուի զանոնք յոր-
դորէ իւր գաղափարը ընդունե-
լու (*) Մաղհար բաշայի խոր-
հուրդէն տարբեր չեն և թերե-
ւէս ալ յոռեգոյն այլ է, Չէյ-
թուրն մէջ զօրանոց մը շինել
կանոնաւոր գինւորաց համար:

Հոս ինչպէս նաև ի Չէյթուր
քրիստոնէայ ժողովուրդը ամե-
նեւին չհաւատը քննչաց խոստ-
մանցը ի մասին բարւոքման
վարչական վիճակին, և կըսուի
արդէն ամենայն իրաւամբ թէ
Հայերը միշտ իրենց կրօնակից-
ներէն մատուցեցան, և թէ
Նուրեան էֆէնտին, Գարաճա
Պետրոսէն և Սուքրիտ էֆէնտի-
էն աւելի յոռի պիտի բլլայ:

(*) Այս խօսքով նամակա-
գիրը ինչ կուզէ հասկնել, զայդ
չկրցինք լաւ բնութեւ կամ իմա-
նալ, միայն թէ այս կերպ բա-
ցատրութեան կամ մեկնարա-
նութեանը մէջ յաչս Բ. Դրան
զՆուրեան էֆ. անուանարկելու
փորձը շտեմ մը կ'ընդունու-
ուի:
Մ. Խ.

որոնք նախկին կուսակալ Գեա-
միլ բաշայէն զրկուած էին հոն
յիշեալ ժողովրդոց միաքը հան-
դարտեցնելու:

Յովսէփ Արաբեան
* * * * *
Կետաղրեալ տեղը 8-
10 տողէ բաղկացեալ վերջա-
բան մը կայ զոր մենք բոլորու-
վին իրաց թողուցինք, զի բուն
նամակին պարունակութեանը
բնական եղանակացութիւնը չբ-
լալէն գատ, ընդհ. օսմ. հայ-
պաշտօնավարաց նկատմամբ կը-
ծու և չարալեզու կարծիք մը
կ'յայտնէ, որ Ունիոյ խնդրէն
բոլորովին դուրս է, մինակ ե-
թէ Նուրեան էֆ. ի վրայ դըր-
ուած յանցանքը սա է թէ՛ Ու-
նիոյ մէջ շինել ուզուած ամրոց-
ներուն տեղ ինքք միեակ զօրա-
նոց մը շինել, և գաղթական
Չէրքէզներ բնակեցնել ուզուե-
լուն տեղ՝ կանոնաւոր զօրք դը-
նել տալ ուղեր է, այս երկու-
ցունց տարբերութիւնը և իրար-
մէ աւելի կամ նուազ սենեա-
լիք քննարկ ու շարժիւր ընթերցո-
ղաց քննութեանը յանձնելով,
Նուրեան էֆ. խորհուրդոցը զը-
նահատուէն ալ իրենց գատաս-
տանին կ'թողուի:

Ունիոյ կայս. քննիչներուն
որոշմամբ օսմ. զօրքը հող մշտ-
նելէն ետքը, երկու վարդապե-
տաց արարու մը յիշատակեցինք
երէկուան թերթով:

Ասանցմէ միայն, Գրիգոր
վարդապետին յանցանքն է ե-
զեր յայտնաբար բսելը թէ՛ Ու-
նիոյ մէջ զօրք մտնելը՝ Ունիցի
ժողովրդին պատուոյն տրատ կը
բերէ՞ կայս. Գրիգորներն այս
խօսքէն հետեւեցնելով թէ յիշ-
եալ վարդապետը ազոյ ժողո-
վարքը կուզէ զըգռել Ունիա-
յէն օր հետի տեղ մը կաք-
տորէ:
Միւսին՝ Յովհ. վարդապետին

ալ յանցանքն է եզեր կառա-
վարութեան յայտնելը թէ՛ Ու-
նիոյ վանքը տուրք տալու կա-
րողութիւն չունի:

Այս երկուքէն զատ ուրիշ
երրորդ վարդապետ մ'ալ կայ
եզեր արտօրուած, Պատրիար-
քարան հասնող գրութեանցը
մէջ յիշատակեալ:

Ատաբազարի անապահօվու-
թեան մասին տեղացոց հանրա-
գիրը մատուցանելու համար
Փ. Ա. Ստեփան վարդապետ տա-
կալին մինչև ցայսօր մեծ Եպար-
զոսին չէ կրցած ներկայանալ,
ն. Բարձրութիւնը Բ. Դուռը չը
գտուն պատճառաւ:

Միւս կողմէն ալ կ'ծանու-
ցանքն թէ նոյն վիճակին օսմ.
տեղական կառավարութիւնը
գիտնալով արդէն որ Փ. Ա.
Ստեփան վարդապետ Բ. Դրան
բողք մատուցանելու համար
մայրաքաղաքս եկած է, իսկոյն
միջոցներ ձեռք առնելով 70-80
հողի կ'ծերբակալէ շատը Չէր-
քէզ, որոյմէ 10-12ը ետքէն
ազատ կ'թողու:

Ասով հանդերձ նոյն կողմե-
րը տակալին բռնութիւն, տա-
ւազակութիւնը, ու յափշտա-
կութիւնը կ'չարունակեն: Անց-
եալներն մեր յիշատակած վեր-
ջին մէկ քանի ոճրագործու-
թիւններէն զատ, չարագործք
նաև 7-8 տարեկան յոյն տը-
ղոյ մը յափշտակել են, Գայ-
մասի մէջ երկու տաճիկ զօր-
կեր սպաններ են, և խել մ'ալ
զիւղացոց ու ճանրորդաց կեն-
դաններն յափշտակել են:

Խառնուրդի նորընտիր թաղ-
խորհուրդը ընդհանուր գահու-
նակութեան արժանի ուրախա-
ութիւ և գովելի գործ մը կա-
տարեց, զիւրին Ներսիսեան երկ-
սեռ վարժարանը երէկուընէ
Շահնազարեան վարժարանի շէն-
քին մէջ փոխադրելով:

2.34
2.33
2.35
2.29
5.00
2.20
00.00
15.00
00.00
2.00
99.00
34.00
21.75
4.02
3.15
6.20
4.13
2.35
47.25
7.09
09.12
87.23
89.39
47.02
10.00
51.10
14.00
15.00
05.30
77.00

Շահնաղարեան վարժարանը, որոյ շէնքին ու մէջի պարունակած բոլոր գոյքերուն պահպանութիւնն ու հսկողութիւնը, ազգ. վարչութեան օրոշմամբն ու Ամեն Ս. Պատրիարքին հաճութեամբն ու հանութեամբը, խաղաղութեան խորհրդոյ յանձնուած էր տարիէ մ'ի վեր, վերջին ծայր խղճարի վիճակի մը հասած էր, շէնքին մէկ մասը հետզհետէ քայքայուելու վրայ, ոչ պատուհան, ոչ փեղի, ոչ ապակի և ոչ այլ ինչ մնալով, մնացածն ալ գրեթէ կորսուելու վտանգի տակ ընկած, Տնտես. խորհրդոյ կողմէն կնքուած եւ զմեծաւ սննդակներէն ու գլխաւոր հանգանակներէն ուսմանց կնիքը խզուած ու բացուած եւ հարկաւ կեցած գոյքերուն մէկ մասն անհետացած, Շէնքին մէջ անցեալ տարի բնակեցնել տրուած բուժակի գաղթականներէն զատ, որոնք ինչքան փայտի ու տախտակի վերաբերեալ նիւթեր գտած էին՝ ամենքն ալ վառելով սպառել էին, այսօր իսկ շէնքին այլևայլ մասանցը մէջ 5-6 ընտանիք կ'ընկէին ձրի, որոնք գոնէ շէնքին մնացեալ մասանցը մէջ գտնուած գոյքերուն վրայ մօտէն հսկելու անգամ հոգ չէին տարած, հետ զհետէ քայքայման վիճակի մէջ ընկած էր, որ եթէ տարի մ'ալ այսպէս շարունակուէր, շէնքին աւերակացը բեկորներէն զատ ուրիշ բան պիտի չտեսնուէր:

Ասկից զատ յիշեալ շէնքին մեծ մասն անբնակ մնալովը, ատենէ մ'ի վեր էր որ անլուր գոյթակազան և անհաճոյ իրողութեանց տեղի և առիթ կը թողուէր:

Թաղ. խորհուրդն իր պաշտօնն ստանձնած օրէն, իւր ու շարքութեանն ու հագածութեանը առաջին առարկայ ընելով փառաւոր անցեալ մ'ունեցող յիշեալ անտէր մնացած շէնքին և գոյից պահպանութեան խնդիրը, այս կիրակի օր անձամբ հոն այցելեց, ուր արեւմտ խղճարի վիճակը տեսնելով, ճանչեց ու համոզուեցաւ թէ այդ ընդարձակ շէնքն ու մէջի գոյքերը կատարելապէս պահպանելու համար չկար աւրիշ միջոց մը՝ բայց եթէ զայն ուղղակի իր արամաղութեանը տակ առնուլ, և շէնքն, ըստ որում գարոց, դարձեալ նոյն վիճակին մէջը գնել, մէջը ձրիաբար բռնակող ընտանիքներն գորս հանել, հարկ եղած բազմամասնորոգութիւններն ալ ընելու յանձնառու լինելով, որպէս զի շէնքը չբայքայի, և քանզի ներսիս ան ազգ. վարժարանի շէնքն ալ տղոցոց բնակութեան անյարմար ըլլալու չափ հինցած

էր, կորոչէ ազգ. վարժարանին ուսանողները Շահն. շէնքին մէջ փոխադրել, և այնպէս պահպանել զայդ. համոզուած ըլլալով թէ շէնք մը աւելի կ'հիննայ անբնակ մնալով, որչափ նոր և մաքուր կ'մնայ բնակելի լինելով, մանաւանդ թէ այս կերպիւ քիտա դարձած ամառի շէնք մը՝ վերստին իր դպրոցական շիրքին մէջը կ'հաստատէր:

Թաղ. խորհուրդը խնամուտ և վստահ իւր այս որոշման օրինակորութեանը և օգտակարութեանը վրայ, հեռակեղ օրն անմիջապէս ձեռն ի գործ կ'արկանէ և երէկու ընէ աշակերտներն հոն փոխադրելով կ'բանայ վարժարանը ներսիս անուան տակ, առժամանակեայ կերպիւ, մինչև որ Նուպար-Շահնաղարեան վարժարանի խնդիրը կարգադրուելով, այդ շէնքը իր կրօնակարարին նպատակին ծառայեցնելու վիճակին մէջը զրուելու ժամն հնչէ, միանգամայն և հարկ եղած նորոգութիւններն ալ ընելու ձեռք գործելով, կրօնքոյ տակ առնուած նիւթերն ու գոյքերն ալ ապահով վիճակի մը մէջ կ'դնէ, որոյ կանոնաւոր մէկ ցանկը իւր տեղեկագրով հանդերձ մօտ օրէն ալ ազգ. վարչութեան պիտի հաղորդէ:

Այսպէս խաղաղութեան խորհուրդը իր իմաստուն տրոհելովութեամբը թէ՛ շէնքն ու իր մէջի գոյքերը մօտալուտ կործանան վտանգէ մը զերծած եղաւ և թէ ազգին ուսանող մանկտին ալ կանոնաւոր և ընդարձակ շէնքի մը մէջ փոխադրած եղաւ, ուր աւելի դիւրութեամբ և յաջողութեամբ պիտի կարենայ գործադրել իւր ուսմանց Յայտագիրը, և կ'յուսեմք թէ շատ չանցած՝ թաղ. խորհուրդը իր Յայտագիրն հրատարակելով գիշերօթիկ աշակերտները ընդունելու պատրաստ ըլլալը կ'մանուցանէ հասարակութեան, որով և աւելի ևս թէ՛ դպրոցատէր ազգայնոց օգնութեանն ու ձեռնտուութեանը և թէ վստահ Նուպար բաշայի համակրութեանը արժանի կը հանդիսանայ, խընամակալութեան, վարչութեան ու ներսի. ժողովոյ 4-5 տարիէ ի վեր լուծել չկրցած մէկ խնդիրը, խաղաղութեան խորհուրդն իր սոյն գովելի տնօրէնութեամբը ինքը լուծած ըլլալով, և ուրիշ սնուան և հոգատարութեան մը ներքե՛ այդ շէնքը դարձեալ իւր հիմնարկութեանը նպատակին ծառայեցնելովը, կրկին նմա վերագարձելու յուսով իւր անցելոյն վառաւոր վիճակը, որոյ մէջ խաղաղ ալ իր բաժինն ունի այս անգամ, և տարիէ ի վեր

փակուած ու ամառի մնացած Շահնաղարեան վարժարան մը՝ դարձեալ խաղաղութեան ձեռք. քը բացուելովը, որ աներկբայ եմք թէ ընդհանուր ազգին մեծ խնդրութիւնն ու գոհունակութիւնն պիտի պատճառէ:

Կիմանամք թէ Ամեն Ս. Պատրիարքը յառաջիկայ կիր. օր Ղալաթիոյ Ս. Լուսաւորչայ եկեղեցին, սորա տօնախմբութեան առթիւ, Ս. Պատարագ մատուցանելու հրաւերն ընդունել է:

ՀՆՈՒՍ.ԳՐԱԼՈՒՐՔ

Լոնտրա 24 յնս. Պոլիարիոյ իշխանը Կ. Պոլիս պիտի չգայ, այլ իւր իշխան ընտրուելը հաստատող կայս. հրովարտակը օսմ. կառավարութեան կողմէն բարձրաստիճան պաշտօնէի մը ձեռքը բուսուցաւ պիտի դրկուլ, Բ. Դուռնինքը պահանջներ է որ իշխանը Կ. Պոլիս չգայ, և սորա պատճառներն ալ տէրութեանց հաղորդել է: Օսմ. կառավարութիւնը Յունաստանի հետ բանակցելու համար իր պատուիրակները այս շարժում մէջ պիտի սրսչէ:

Յունաստանի սահմանագրելոց խնդրոյն վրայ լորտերու խորհրդարանին մէջ եղած հարցման մը պատասխանելով Սալիդ. պըրի մարզիզը, ըսաւ թէ այս մասին Անգլիա հարկ եղած դեպքանագիտական օգնութիւնը պիտի ընձեռէ թուրքիոյ:

Այս աստուս հասած Յիւլիպէ 24. — Ալեքօ բաշայայանեց թէ երբէք խօսքը չկայ ոնէ պատգամաւորութիւն մը զրկուլ Արեւ. Բուժակի կողմէն, Պաթէմպէրկի իշխանը Պուլկարիա հասնելուն՝ զինքը ոչ չունելու համար:

ԳՐԱՄԱԿԱՆ

Այս առաւօտ բացուեցաւ	12.38
Բուժակի	47.25
Թղթագրամ	1250 00
Պրինձ	179.00

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարնոյ նախկին կուսակալ Գիւրտ իմասիլ բաշայի, որ այժմ գինւորական ժողովոյն անդամ է, Մէծիտիէի գահարազարդ Ա. կարգի պատուանշան շնորհուր է:

— Կ'հաւաստեն թէ Գարաթօտօրի բաշայ չէ բնդունէր՝ Յունաստանի սահմանագրելոց խնդրոյն վրայ բանակցելու համար Բ. Դրան կողմէն պատուիրակ որոշուելու պաշտօնը:

— Պաշտօնէից ժողովը երէկ Բ. Դուռը իւր առընջեան նիստէն յետոյ, երեկոյին կայս. պալատը երթալով հոն ալ նիստ մ'ըրեր է՝ առանց Եպարդոսին ներկայութեանը:

— Յիւլիպէի Յոյները կրկին անգամ ընտրուելու են Ալեքօ բաշայի դէմ, սահմանագրութեան և արդարութեան օրինաց հակառակ վարուելու ամբաստանութեամբ:

— Երէկ Բ. Դուռը սենեկած պաններուն յարկը գող մտնելով սնտուկները կ'կտրէ, և մէջի ստակները յափշտակելու վրայ եղած ատեն իմացուելով կ'ըբանուի և օստիկանութեան կ'յանձնուի:

— Կիրակի օրը Սարաճխանէ թաղը գաղթական քանի մը տըղաք թլփատութեան խաղաղալու երկելով զրօսանքի համար, յարդէ անկողին մը կ'ընեն և վրան 5-6 տարեկան տաճկի տղոյ մը պառկեցնելով 9 տարու գաղթական աղայ մ'ալ սուր դանակով մը թլփատութեան գործողութիւնը կ'կատարէ: Թլփատելոյն հանած աղաղակին վրայ, գրացիք վրայ հասնելով կառնեն մանկիկը տունը կ'փոխադրեն, ուր յատուկ թլփատիչ վարպետ մը կանչուելով, սա կ'յայտնէ թէ՛ գրեթէ իրեն չափ աղէկ թլփատել է: Իսկ օստիկանութիւնը թոյլ չտալու համար որ ուրիշ մէկուն վրայ ալ փորձէ այդ բանը, կ'ձեռքապահ յիշեալ թլփատող գաղթական տղան:

— Պ. Զարիֆիի առաջարկած փոխատուութեան ծրագրին ըսկըզբունքն ընդունուել է թէպէտ Բ. Դրնէն, իսկ մէկ քանի պայմաններն դժուարութեան հանդիպել են, այն է մաքսային հասուցի վրայ հսկելու պաշտօնով ֆօմիսէրներուն միւնակ օտարագիրներէն ընտրուելու, մէկ մ'ալ փոխառութեան պայմանագիրը դեպքաններուն վաւերացնել տալու պայմաններն, զորս Բ. Դուռը զբեկամակեր է ընդունիլ:

— Տէրութեանց Պօլսոյ դեսպաններուն շոքեաւաններն քանի մ'օրէ ի վեր է մեկնելով նուազանգուտէս Սուլիմա կերթան: Դանուրի յիշեալ գետաբերանին վրայ հսկելու համար, ուր նոր դրուած օրինաց հակառակ ինչ ինչ անտեղութիւններ պատահած ըլլալով, տէրութիւնք այս միջոցն ընտրել են յարգել տալ զրուած օրէնքը, որոյ համեմատ Սուլիմայի նաւահանդիստը կեցող շոքեաւաններն գիշերը ժամը 15ն ետքը ցամաքին հետ հաղորդակցութիւն պիտի չունենան:



ԱԶԴ

Կ'ձանուցանեմք Արգոյ հասարակութեան որ վերոյ նշանակեալ նշանները բոլոր Տճ. կատարի համար ինձ առանձնաշնորհեալ բլլարով, թուական էս մինչև 13 որ վերջը սոյն նշանով կարժարներ բերողին և վաճառողին զէմ, ըստ արամադրութեան օրինաց պիտի լրորդեմ:

Ս. Մանուկեան
Շէրիֆ-Ռաշախան թի. 6
13/25 յունիս 1879

ՊՕՅԱՃԸ ԳԻՒՂԻ ԽՆԴԻՐԸ

... Խոնարհութեամբ, Կ'խնդրեմ որ հետեւեալն առնալ, յանուն արդարութեան և ի սէր ճշմարտութեան, ձեր ազգօգուտ լրագրոյ թուոց միոյն միջոցաւ հրատարակել հաճիք, որուն համար կանխաւ իմ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ ձեզ:

Պայտըզի զիւզի ազգային վարժարանի կառավարիչ Պ. Արքահամի խնդրեմ, որ արդէն ծանօթ է հանրութեան, և ամիսներէ ի վեր անլուծելի մնացած է, քանիցս անգամ կրօն, ժողովոյ, քաղ. ժողովոյ, վերջապէս ժողով չմնաց որ ալ չգիտէին զիւղացիք, խնդրելու համար որ Պ. Արքահամի և Պ. Գեմաճեանի դատը արդարութեամբ անսուտի: Գիւղացուց արդար պահանջուեալ ամիսներով անխելի մնալէ յետոյ քաղաքական ժողովն հաճեցաւ Միջազգիչի Տ. Սահակ քահանայն և երկու անձինք զրկել Պայտըզի զիւզի: Բայց ինչ էր այս քննիչներու պաշտօնը, զուցէ իրենք իսկ չէին գիտեր և չեն գիտեր ցարդ Մեծ. քննիչները շուտով ժողով կազմեցին մեծաւ մասամբ Գեմաճեաններէ բաղկացեալ, այդ ժողովի մէջ կատարելագոյն կը տիրէին անիրաւութիւնք, անիշխանութիւնը և կողմնակցութիւնը, ուր Պ. Յովհաննէս Գեմաճեան անյարգութեամբ ժամերով կ'փաստաբանէր իւր իսկ չհամարուած խնդրոց վերայ, որոց ունկնդիր կըլլային ժողովականք, և երբ խօսելու կարգը թշուառ Պ. Արքահամի կը գար, յիշատակ և ժխտը կ'յարուցանէին Գեմաճեանք, չիտիմեցնելու համար զՊ. Արքահամի միթէ այս անիրաւութիւն չէր, որոյ դէմ լուռ կ'կենային Մեծ. քննիչները և Ամենէն մեծ տէրութեանց ատեաններէն բարեբերով ամենէն փոքր ժողովներուն անգամ զգալի եղած է արձանագրութեան յոյժ կարեւորութիւնը, բայց իմաստուն քննիչները հարկ չդատեցին արձանագրութեան, որ ամենէն աւելի ուշադրութեան արժանի կետ մ'էր, քննիչները այդ օրէնքի դէմ ալ գործեցին, երբ Տ. Սահակ և Գեմաճեանք,

բունութեամբ յանցաւոր դատել կուզէին անմեղը, հաճի Սարգիս անուն մէկը (որ դժբաղդարաբար գիւղիս մը խմարը կ'գտնուէր) վայրենարար կ'պուռայ թագ. խորհրդոյ արդարութեամբ անդամներէն միոյն, որ ներկայ կ'գտնուէր հոն, ճշմարտութիւնը պաշտպանելուն համար, թէ չուէ և դուրս ել, մենք քեզ թաղական չենք ճանչնար: Եւ, իսկ այն շնորհայի Տէր Սահակը որ քիչ լսագահէր այն ժողովոյ, Ձաքարիայի նման պապանձած էր այն վայրկեանին, չէր ըսեր թէ դուք իրաւունք չունիք սեէ անհատի մը վրայ բռնանալու և այս ժողովէն արտաքսելու: միթէ այս անիրաւութիւն չէր որ ըրին Գեմաճեանք, միթէ այս կողմնակցութիւն չէր որ ըրին քննիչները, միթէ այս վայրենութիւն չէր որ ըրին Գեմաճեանք, մանաւանդ այն շնորհայի Տ. Սահակը, չեմ գիտեր թէ հետեւեալ օրը ինչպէս պատարագ պիտի ընէր, երբ որ Պ. Համբարձում Արքահամի կ'վկայէր ըսելով թէ, մեր լսիները լուսցող յոյն կիներ տիրամօրս ըսած է թէ, Պ. Արքահամը այս ինչ յոյն օրիորդին հետ է եղեր: ... անոր համար այքովս տեսածի պէս կ'վկայեմ թէ Յովհ. Էփ. ի լսածները (բայց ոչ տեսածները) ճշմարտ են, ժողովականներէն մին յոյն կնոջ խորհրդարանը գալը կ'խնդրէ, բայց ի զուր, Պ. Համբարձում Արքահամի կ'պնդէր թէ յոյն է կինը, եթէ հոս գայ կուրանայ, շնորհայի Տ. Սահակը անիմաստ վկայութեան մը չենլով, դու յանցաւոր ես Արքահամ ըսելով վճիռ կ'տար, մոռնալով որ վճռաւոր ոչ զօրութիւն և ոչ իրաւունք ունէր, տկարամիտ էակ, չմտածէր որ ուրացեալ կին մը սո՛ւտ ալ չիտիր արդեօք:

Տէր հայր, եթէ Պ. Գեմաճեանք քու զաւակդ զրգարտէր, պիտի բաւականանայ ի արդեօք միայն լսի լուսցող և ուրացող յոյն կնոջ մ'անուղղակի ըրած վկայութեանը, տարակոյս չունիմ թէ քանի որ մարդ ես, քանի ըրողս կ'կողմնակցեմ ճշմարտ հայրնէս, ոչ միայն պիտի չըդուռնէր, այլ և ամբողջ հայ ժողովրդեան անաշուք քննութիւնը պիտի խնդրէր, ուրեմն ինչպէս կուզէք որ մեք ընդունինք այն՝ զոր դուք չէք ուղեր ընդունիլ: պիտի բանամ ես հիմայ այն Աւետարանը, զոր դուք յաճախ եկեղեցւոյ բնակէն բարձրաձայն կ'կարդաք: Երբք այնպէս ձեր ընկերոջը, որպէս կուզէք ընել ձեզ անհայտ և Աւետարանի նախարանը և վերջարանը, զոր դուք քառասուն տարիներէ ի վեր կ'կարդաք և չէք սովորած:

ազգիս դժբաղդութեանն ուսուցանելու արագան պաշտօնն ալ կ'վարէք: վա՛յ ձեզ Հայոց ժողովուրդ, Կ. Պոլսոյ ուսումնական քահանայից դասէն է սա, որուն տղիտութեանը վրայ ուշադրութիւն կ'ինչըրեմ: վերջապէս քննիչները այն ատեն միայն մինչև աստիճան մը կըրնան արդարացնել զիրենք, երբ Պատրիարքարանը այդպէս հրահանգ տուած էր մեզ, ըսեն: Գիւղացիք բողոքեցին այդքն, նուրիան դէմ որ ապօրինաւորութեամբ հաստատուած էր, այն ժողովոյ դէմ որ անիրաւութեամբ բացուած և կողմնակցութեամբ փակուած էր: կերելի թէ հայոց ազգային ժողովներն ալ զգալով զիւղացուց արդար ձայնը, հաճեցան և կամ ստիպուեցան երկրորդ անգամ Պ. Արքահամի պատուով խնդրել քննութեան ենթարկելու, այն խնդրը՝ զոր պահ մը առաջ հուշակաւոր Տ. Սահակը և հանրածանօթ Գեմաճեանք Մարթինի Հէնրիի հրացաններով զինուած կուզէին մեռցնել, թողել և հոգուցն իսկ ըսել զի մի դուցէ Գրիստոս մը գար և և յարութիւն տար անմեղին: Ապուշ Էակներ, չէք գիտեր արդեօք որ ազգեք և վատք միայն ձեր սուրին դէմ գլուխ կ'լսանարհեցնեն, իսկ երկուսս արդարութիւնը որ միշտ կ'վերածնի աւելի գիտուն և աւելի եռանդուն, աւելի ազգասէր քան անձնասէր, աւելի սահմանադրասէր քան փառասէր, պիտի կործանէ այն անիրաւութեանց պարիսպները, որոց մէջ կապատանիք դուք, որքան հարածէք, արդարութիւնը, ճշմարտութիւնը ի մի բան Աստուած, անհամեմատ առաւելութեամբ պիտի տարածուին դուք երիտասարդութեան միջոցաւ: 19 տարիներէ ի վեր է որ երկուսս արդարութեան ճակատին վրայ ծանրացուցած են այդպարարները, Սէրվիէն Ռուսինեան, Օտեան և այլ անմահ հողիներ:

Եւ դու ոյ Պ. Գեմաճեանք, դու որ աւելի լաւ կ'բնորոշես հայ մը մեռցնել քան թէ սխալք խոստովանիլ, պատասխանէ ինձ, ինչպէ՞ս պիտի ներկայանաս այն անհաւոր ատենին, որ ոչ իզմիրեան կայ և ոչ Տ. Սահակ, այլ Արքահամի և քու Աստուածը, Բնութեան արարիչը, տիեզերիս ճարտարագետը: Նա միայն չ'խաբուիր և քու օրտիգ խորը կ'թափանցէ, եթէ անիրաւեան՝ յաւիտենականը պիտի դատապարտէ զքեզ, ի բաց կորիւր յինչն անիմեալ ըսելով, որպէս պիտի հաստատեմ հիմայ թէ անիրաւեան:

Նախ պէտք է գիտնաք որ Պ. Գեմաճեանք, արդարասէր մարդը բնաւ կողմնակցութիւն չ'խնդրէր, որքան ալ տկար ըլլայ, պէտք գիտնաք որ ճշմարտ արդարասէր մարդը սուտ խօսքերով չ'պաշտպանէր իւր դատը, նաև հարկ է գիտնալ որ արդարասէր լինելու համար պէտք չէ քմահաճ լինել:

Դուք՝ որ ամենէն առաջ կը սէրք թէ, արժանահաւատ ընտանիքէ մը լսած եմ, ինչ որ կըսեմ Արքահամի մասին, վերջը փոխելիք խօսքերնիդ, զիւզիս երեւելի յոյներէն երկու անձանց (հարկ եղած ժամանակ կրնամ հաստատել) ըսեր էք որ Ներսէս վարդապետը տեսեր է իւր աչքովը տանը պատուհանէն և ինձի ան ըսաւ. եւ երբ յոյներէն մին Ներսէս վարդապետի կ'ղիմէ խնդրել ստուգելու համար, զարմանալի է որ Ներսէս վարդապետ կ'հերքէ ձեր խօսքերը ըսելով թէ՛ ես ոչ բան մը տեսած եմ և ոչ ալ Գեմաճեանէ Էփ. այդպիսի բան մը ըսած եմ: Արդ՝ դու եղիր դուստուս, ո՛վ միջնադարեան Պ. Գեմաճեան և հիմայի հանձարովք պատասխանէ հայ ժողովրդեան, երբ քեզ հարցնեն թէ՛ միթէ ուրացող յոյն կինը սուտ չը՛լսուիր, միթէ Ներսէս վարդապետը զրպարտողը Արքահամը չը՛զրպարտեր:

Աւա՛ղ որ կրօնքը ձեզի պատրուակ բռնելով և օրէնքը հաճաքի փոխարկելով, ինչ որ կընէին Միջին դարու կարգի նախները, նոյնը ընել կուզէք դուք ներկայ դարուս մէջ, արդարեւ աւելի մեղադրանաց արժանի էք դուք, թէպէտ չէք կարող ձեր նպատակին հասնել, մինչև իսկ կաթողիկոսներ եւ տէրութիւններ ալ կուրծրէն կողմնակցութիւն ընեն քեզ, որչա՛փ անիրաւութեամբ զօրացրնես զքեզ, տակաւին ջախջախի հղիքի չափ զօրութիւն չես կորնար ունենալ ժողովրդեան այն մասին տալէ, որք լաւ ուսումնասիրած են պարս և իրաւունքս ճշմարտութիւն եւ արդարութիւն քեզ անձանթ յատուածային բուռերը. ժողովրդեան այդ կարգէն են նաև Պայտըզի զիւզի Հայոց մեծ մասը, որ ցարդ ճշմարտութիւնը պաշտպանած է և այսուհետեւ ոչ միայն պիտի պաշտպանէ, այլ եւ պիտի յայտնէ բոլոր ազգի թէ Պայտըզի զիւզի դարձեալ ինչպէ՞ս պիտի ներկայանաս այն անհաւոր ատենին, որ ոչ իզմիրեան կայ և ոչ Տ. Սահակ, այլ Արքահամի և քու Աստուածը, Բնութեան արարիչը, տիեզերիս ճարտարագետը: Նա միայն չ'խաբուիր և քու օրտիգ խորը կ'թափանցէ, եթէ անիրաւեան՝ յաւիտենականը պիտի դատապարտէ զքեզ, ի բաց կորիւր յինչն անիմեալ ըսելով, որպէս պիտի հաստատեմ հիմայ թէ անիրաւեան:

պանդներ, որ եթէ յարձակու-
ղական դիրք ալ չառնուին, թէ
բանակներ կազմեն և յարձա-
կին մեր վրայ, թէ գնտակներ
տեղան մեր գլխուն, թէ թըն-
դանթներով հալածեն մեր ճըշ-
մարտութիւնը, առանց երկիրդի
պիտի պատտասխանենք նոցա՝
ճշմարտութիւն, արդարութիւն
և դատ. ահա ասոնք են մեր
հրահրութիւնը և մեր զէնքերը,
որ ոչ կսպառեն և ոչ կ'փտա-
նան, այս զէնքերով պիտի կոր-
ծանեմք այն անիրաւութեանց
պարխպները որոց մէջ կայսու-
տանք բոլի, թող գիտնանք զի
հետ մէկտեղ ճշմարտութիւնը
հալածողներն ո՛վ քէմհաճեան,
որ ժողովրդեան ձայնը իզմիւր-
կեանի ձայնէն, քաղ. ժողովոյ
ձայնէն անհունառաւելութեամբ
զօրաւոր է, ժողովրդեան ձայնը
Աստուծոյ ձայն է, ժողովուր-
դը ճշմարտութիւն կաղաղակէ,
Աստուած ալ ճշմարտութիւն է
արդէն:

Վերջին խօսք մ'ալ ո՛վ Պ.
Ֆէմհաճեան և յետոյ հարկ ե-
ղած ժամանակ կրկին կ'տեսնե-
տ իմք. միայն թէ սա կաղաղիմ
որ եթէ զրպարտիչ լինելդ, եթէ
անիրաւ լինելդ և եթէ Պ. Աբ-
րահամի անմեղ լինելուն համս.
զուած չես, իմաց տուր ինձ ա-
ւելի զօրաւոր փաստերով պիտի
կրնամ հաստատել ինչ պէտք
է խառն ժողովոյ դիմել, ժողո-
վրդեան առջեւ դատուիմք,
թող ժողովուրդը քննէ, հաս-
տատէ և վճռէ. փորձած էք
արդեօք, խաբերայք միայն ժո-
ղովրդեան անաչառ քննութենէն
խոյս կ'տան:

Ո՞վ Պ. Ֆէմհաճեան, եթէ
այդքան նախանձախնդիր ես
այն եկեղեցւոյ սրբութեան, որ
շարքերէ ի վեր իւր որդւոց ար-
եամբը Սուրբ պահուած է. եթէ
այդքան նախանձախնդիր ես
այն եկեղեցւոյ անուան, որ զեռ-
տարի մը լինելը երբ Լուստընի
Անգղիական արքեպիսկոպոս կը
յայտնէր աշխարհի առջև թէ՛
Լուստուրչական եկեղեցին եթէ
ոչ առաջին, զէթ առաջիններէն
մին է. եթէ այդ գովելի նա.
խանձախնդրութիւնը կը կրես
սրտիդ մէջ, վարկեանի մը յա.
պաղուած մահացու մեղք է քեզ
համար, և ինչ պէտք է ամիս.
ներով աշխատիլ ձեր շտեմած
և բնաւ տեղի չունեցած դէպ-
քերը իրականացնելու ջանալան.
մեղ Պ. Աբրահամի վերայ, ար.
դարև տաժանելի և անարդիւն
աշխատութիւն Յո՛ւր ձեռքդ,
ո՞վ քէմհաճեան, այս բերան ոչ
սաել և ոչ զրպարտել գիտէ.
տուր ձեռքդ կրսեմ, այց հի-
նեմք Հայաստանի դաւառները,
քաղաքները և դիւղերը, պիտի
ցուցնեմ, պիտի հաստատեմ քե-
զի թէ քանի՛ քանի՛ եպիսկո.
պաներ և քանի՛ վարդապետ-
ներ, որք մայր թեանց մէջ կը
լողան . . . Եթէ այնչափ հեռա-
ւոր ճանարդութիւններ չ'եմ
կարող բնել բսես, կրկին չես
կրնար ձեռքէս աղատիլ կրկին
անգամ տուր ձեռքդ, կրնամ
ցուցնել քեզ կի Պոլսոյ մէջ ոչ
կզերականներ, որք ի ներքուստ
գեղատիչ գայլեր են և ոչխար

ձեացնել կուզեն զիրենք, Չեմ
ուզեր աւելի խօսիլ այսօր այս
խնդրոց վրայ զի ազգիս ցաւերը
անչափս վշտացուցած են զիս
արդէն, և ամեն անոնք, որք
հայ սիրտ մը կ'կրեն իրենց լան-
ջաց մէջ. միայն թէ լաւ գիտ-
ցած եղիլ որ ճշմարտութիւնը
անպարտելի է:

Տեսէ՛ք, ո՞վ մեծդ ներսէս,
յոյս և պաշտպան Հայոց հայ-
րենեաց, տեսէ՛ք թէ ինչպէ՛ս կը
հալածուի ճշմարտութիւնը, Ե-
թէ դուք ի դիմաց Հայոց աղ-
գին կառավարութեան կ'րողու-
քէք Հայաստանի անգուժ բար-
բարուններուն համար, ես յա-
նուն արդարութեան և ի դիմաց
գիւղացւոց ձայն կ'բարձրացրա-
ցընեմ Ձեր Սրբազնութեան աղ-
գիս առջև, որպէս զի տեսէք
թէ Ձեր Սրբազնութեան փոխա-
նորդներ՝ Ձեր հիւանդութենէն
օգուտ քաղելով՝ ինչպէս իրա-
ւունքը ստնակիւն ընել կուզեն
եթէ հիւանդ եմ բսէք, բժշ-
կութիւն մաղթելով յԱստու-
ծոյ, պիտի բսեմ թէ ազգդ ա-
ւելի հիւանդ է:

8 Յնս. 79 Հայ Եջ
Պոյաճի-Դիւղ

Ազգ. — Հայուհեաց Աղղա-
նուէր ընկերութիւնը կ'փութայ
ժանուցանել թէ ամեն ազգա-
ւէր հայուհիք, որք կ'կամին
հաղորդակցել յիշեալ ընկերու-
թեան հետ, պէտք է իրենց
նամակներն ուղարկեն Գպրոցա-
սիրաց-Արեւելեան սենեակ նո-
րատունկեան իսան թիւ 11 կա-
լաթա, կամ իսկիւտար Սէլա-
միէ ֆարաօլի զիմաց 321 տունը:

Հաւաքութեան ԳԾ. 12 Յունիս
ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Բաց	12 34
Գոց	12 36
Բարձր գին	12 37
Յած գին	12 34
Թղթադրում բաց	1242 20
բարձր	1255 00
ցած	1225 00
ժամք 11	1250 00
Պոխ. 63ի	Պր. 000 00
» 65ի	» 071 00
» 69ի	» 069 00
» 73ի	» 064.00
Գանձատուս	121.75
Սուրբ թէ Ժէնէրալ	4 02
Սուրբ թէ Օթօման	3 15
Պատք տը Բօնաթ.	6 20
Վրէտի Ժէնէրալ	4 13
Թրամիէյ	2 35
Բուս. Երկաթուղի	47 00
ԸՆԹԱՅԻՆ ԴՐՈՄՈՅ	
(Ուս. ար. 100 ուս. հար. 1)	
Սնդղ սակի	109.41
Գողղ.	87.24
Բօլ	89 39
Վարպօն տըմաթ	17.02
» թղթադրում	10.00
Վրլմից	51.10
Հինգնոց	14.00
Սէթալիք	15.00
ձերմակ մէծիտ	05 28
Պղինձ	178.00

LOTÉRIE.

Մ Ե Ծ Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն
2 Ր Դ Ս Է Ր Ի

Համպուրկի Դերմանական կառավարութիւնը, որ սոյն նոր
գրամական մեծ վիճակահանութիւնը վաւերացուցած է, ոչ մի
այն բաժնետոմսերուն ցրուելը, այլև ամեն քաշուած վիճակա-
հանութիւնը կ'հակակշռէ, Պարգևներուն ճշիւ վճարմանը հա-
մար Գանձուն բոլոր արժէտոմսերովը երաշխաւորելով, այնպէս
որ իւրաքանչիւրին ամեն կողմանէ ամենամեծ ապահովութիւն
տրուած է:

Արդէն այս պարագայն բաւական ապացոյց մնէ թէ սոյն
վիճակահանութիւնն ամեն ապահովութիւնն ունի Սոյն նոր
մեծ վիճակահանութիւնն այժմ մինակ 82.000 տոմսակէ կ'բաղ
կանայ, յորոց 40.000ը անպատճառ պիտի շահին, որմէ բացա-
յայտ կերելի սոյն ձեռնարկութեան շահաւէտութիւնը, վասնզի
տոմսակաց գրեթէ կէսը վաստկող պիտի ըլլան: Բոլոր պար-
գևները արագարար մէկմէկու յաջորդող միայն 6 Բաժանմամբ
պիտի քաշուին Առաջին մեծ Պարգևը պիտի ըլլայ

533,000 Թրակ

Իսկ երկրորդական Պարգևներն են՝ գլխաւորաբար

Տոմսակ	Ցրանք էն	Ցրանք	Տոմսակ	Ցրանք էն	Ցրանք
1	333-333	» 333-333	5	40-666	» 53-330
1	200-000	» 200-000	4	8-000	» 8-000
1	133-333	» 133-333	54	6-666	» 359-964
1	80-000	» 80-000	5	5-333	» 26-665
1	66-666	» 66-666	70	4-000	» 280-000
2	53-333	» 406-666	216	2-666	» 575-856
2	40-000	» 80-000	2	2-000	» 4-000
5	33-333	» 166-665	2	1-600	» 3-200
2	26-666	» 53-332	531	1-333	» 707-823
12	20-000	» 240-000	670	666	» 446-220
24	13-333	» 319-992	945	400	» 378 000

Համագումար՝ շահող բաժինք 40.000 Պարգև:
Ամեն մէկ վիճակահանութենէ իսկ և իսկ ետքը, գերմա-
նական կառավարութեան հսկողութեան ներքև, բոլոր շահող
բաժիններուն Պարգևները անմիջապէս Ոսկեգրամով պիտի վը-
ճարուին:

Մէք սոյն սկզբնական տոմսակներուն վաճառումն յանձն
առած ըլլալով, առանց վերադիր ծախուց, իրենց բուն գինը,
բովք կ'ըրկեմք: Թառաջիկայ 2 բաժանմանց վիճակահանութեանց
համար պաշտօնական որոշուած գինն է

Երկրական 1 Տոմսակ համար Թրակք 45.—
Իսկ ինչ Տոմսակ համար Թրակք 22.50

Տոմսակաց արժէքը պէտք է ուղարկել գաղղիական Պան-
քայի դրամատոմսերով, թղթատարութեան ծախքը զրկողին վը-
րայ ըլլալով, և կամ Գողղիոյ Անգղիոյ կամ Դերմանիոյ Պան-
քաներու վրայ փոխանակագրերով:

Դրոմն բնդունելնուս պէս յատուկ նամակաւ կ'ըրկեմք
յանձնարարեալ Տոմսակները, որոնք աերութեան Չինանանովը
վաւերացեալ են. առանց հետ կ'ըրկեմք նաև վիճակահանութեան
Յայտագիրն ալ գաղղիական լեզուաւ, և ամեն վիճակարկու-
թենէն յետոյ Պարգևներուն և շահող թուոց պաշտօնական
ցուցակը. բաց յայտանէ Պարգևները պիտի հրատարակուին
Արեւելի գլխաւոր րագրաց մէջ, Շնորհակալ ենք թուրքիոյ հա-
սարակութենէն, սոյն վիճակահանութեան առաջին Սէրիին նը-
կատմամբ ունեցած մեծ հօգածութեանն համար, և կ'խոստա-
նամք նաև յապագային միևնոյն ճշդութեամբ կատարել իրենց
յանձնարարութիւնները: Կաղաչեմք, որ իրենց յանձնարարու-
թիւնները փութով ուղարկեն, վիճակահանութենէն առաջ, այ-
սինքն՝ յառաջ քան 9 ՅՈՒՂԻՍ (բաւ Լտա.) առ մեր գործա-
տունն ուղղակի ի ՉԷՆՅԵԱԼ ԵՒ ԸՆԿԵՐԻՔ, գլխաւոր գրասենեակ
վիճակահանութեան ի Համպուրկ (Դերմանիա)

ISENTHAL & Cie Bureau principal de Loterie.
Hambourg (Allemagne).

Մեր թղթակցութիւնը գողղ. անգղ. և իտալերէն լեզուօք
կատարուելով, կ'ընդունի որ այս լեզուներէն մէկովը մեզ հետ
թղթակցութիւն մեզ մը Արեւելից քաղաքներէն մինչև Համ-
պուրկ՝ 180 Ժամէն կ'հասնի և փոխադարձաբար:

Adolf Steiner Bureau d'annonces Hambourg

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՒՔ ՎԵՆԵՏԿՈՑ ՄԻԹՈՒՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ	ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ, հատոր Բ. սկզբ- եալ չորեքտասաներորդ դարէն կ'հասնի մեր օրերը, գրեալ աշ- խարհաբար լեզուաւ և կտրեմք հմուտ թեմար. ֆրանք 5 30 :
ՎԻՐԳԻԼԵԱՑ ԵՆԷԱԿԱՆ, Նո- րոց թարգմանեալ ի Դեր. Եդ- ուարդայ ընտիր հայկաբանու- թեամբ ի յափս հայկականս գին ֆրանք 4.25.	